համապատասխան այնքան, ինչքան այդ անհրաժեշտ և միևնույն տեսակի համարը Հարկավ Հին աշխարհում կարելի չի նշել այնպիսի յերկրամասեր, ուր շատ ավելի տաք են, քան վրանը յերկրամաս նոր աշխարհում, բայց նրանց բնակչությունը չի զանազանվում շրջապատող շրջաններին բնակչությունից, քանի որ հագվագյուտ դեպք է, որ նյակներին մի խումբ հարմարված լինի անընդհատ յուրահատուկ պայմաններ ունեցող մի փոքրիկ յերկրամասում Բայց Հնում և նոր աշխարհներում մինչև ֆիզիկական պայմանների տեսակետից յեղած այդ ընդհանուր զուգահեռականությանը, ինչքան խոշոր և նրանց բնակչությունների մեջ յեղած տարբերությունը

Ցնքե այժմ դառնանք հարավային կիսագնդին և համեմատության համար վերցնենք Ամազոնյան, Հարավային Աֆրիկյան և Հարավային Ամերիկայի արևմտյան մասերի ընդարձակ տարածությունները՝ 25°-ից մինչև 35° լայնություն, ապա կարելի չի գտնել նրանց մեջ այնպիսի շրջաններ, որ իրենց ֆիզիկական պայմաններով տեսակետից չափազանց նման լինեն միմյանց, բայց չի կարելի գտնել յերկրք այնպիսի կենդանական և բուսական աշխարհներ, որ այդչափով տարբեր լինեն միմյանցից Ամենահետաքրքիր լինելու Հարավային Ամերիկայի 35° լայնությունից հարավ ընկած մասերի նյակները 25° լայնությունից հյուսիս ընկած մասերի համապատասխան նյակների հետ, ասել է, լայնության տաս աստիճաններով իրարից անջատված և չափազանց տարբեր պայմաններում մեջ գտնվող տարածությունների նյակները միմյանց հետ, ապա կտեսնենք, որ նրանք իրար շատ ավելի մոտ են, քան Ամազոնյան և Աֆրիկայի գրեթե միևնույն կլիմայական պայմանների մեջ ապրող նյակները։ Նման փաստեր կարելի չի բերել և ծովերի բնակչության վերաբերյալ

Մյուս կարևոր փաստը, որին մենք հանդիպում ենք մեր ընդհանուր ակնարկի մեջ, այդ այն է, որ ազատ տեղափոխության կատարելու տեսակետից գտնվող տեսակի պատնեշները և խոչընդոտները անբավ առնչության մեջ են գտնվում գտնվող շրջանների բնակչության հետ։ Այդ մենք նկատում ենք այն մեծ տարբերության մեջ, որ ունեն Հին և նոր աշխարհների գրեթե բոլոր ցամաքային կենդանիները, բացառությամբ հյուսիսային մասերի, որտեղ յերկու աշխարհների ցամաքները գրեթե շփվում են միմյանց հետ և որտեղ գոք ինչ տարբեր-

կլիմայի պահպանում, կարող եր տեղի ունենալ բավականաչափ զգալի հյուսիսային մասերի բնակիչների տղայոց տեղափոխություն, այնպես, ինչպես այդ տեղի ուներ այժմ միայն խոհեմ արկածախնդիր բնակիչների համար։ Նույնը մենք նկատում ենք Ամազոնյան, Ավրինոկայի և Հարավային Ամերիկայի այլ բնակիչների խոշոր տարբերությունների մեջ, որ գտնվում են միևնույն լայնության վրա, քանի որ այդ կերկրներն անջատված են մեկը մյուսից գրեթե այն չափով, ինչ չափով որ դա հնարավոր եւ Երկրային նույն կերևույթը մենք նկատում ենք և յուրաքանչյուր մայր ցամաքի վրա, բարձր և կերկնամածիկ լեռնաշղթաների, ընդարձակ անապատների, նույնիսկ խոշոր գետերի համատարած կողմերում մենք գտնում ենք գտնապան ձևեր, բայց քանի որ լեռնաշղթաները, անապատները և այլն այնչափով անանցանելի չեն, ինչքան մայր ցամաքները միմյանցից անջատող ովկիանոսները, և ամենևին հավանականություն չունեն մեծ տեղաշարժություն չունենան, ինչքան ովկիանոսները, դրա համար էլ նման գետաքերում տարբերությունն ավելի փոքր է, քան գտնապան մայր ցամաքների միջև եղած տարբերությունը։

Դառնալով ովկիանոսին, մենք այնտեղ ևս հանդիպում ենք նույն օրենքին։ Հարավային Ամերիկայի արևելյան և արևմտյան ափերի ծովային բնակիչները չափազանց տարբեր են, բացառությամբ մի քանի մոլլուսկների, խեցգետնազգիների և փշամորթների, որոնք կերկու ափերում նման են իրար։ Սակայն դրանք վերջին ցույց է տվել, որ Պանամայի պարանոցի հակառակ ափերում տարրող ձևերի 30%-ը նույնն են, մի հանգամանք, որ հարկադրել է բնախույզներին կենդանաբանություն, որ այդ պարանոցը առաջները կտրված է կղել։ Հարավային Ամերիկայի ափերից դեպի արևմուտք ձգվում է մի ընդարձակ բաց ովկիանոս, որտեղ չկա և գոչ մի կղզի, որ կարող եր գաղթողների համար կայան ներկայացնել, այստեղ մենք հանդիպում ենք մի այլ կարգի խոչընդոտի, և հենց որ մենք անցնում ենք այդ խոչընդոտը, Խաղաղ ովկիանոսի արևելյան կղզիների վրա հանդիպում ենք այլ և միանգամայն տարբեր կենդանական աշխարհի։ Այսպիսով կերկոք ծովային կենդանական աշխարհներ տարածվում են դեպի հարավ և դեպի հյուսիս բարեխառնական և միջանցքից գոչ շատ հետո համապատասխան կլիմայական պայմաններում։ Բայց քանի որ նրանք անջատված են միմյանցից ցամաքի կամ բաց ովկիանոսի անհաղթահա-

քեզի խոչընդոտանելով, դրա համար էլ նրանք գրեթե միանգամայն տարբերվում են իրարից։ Մյուս կողմից գնալով ջաղաղ ավելանում են արևադարձային մասերի արևելյան կղզիներից էլ ավելի դեպի արևմուտք, մենք այլևս չենք հանդիպում անհատների խոչընդոտանելի և գտնում ենք կամ անհամար կղզիներ, վորոնց կալանելը կամ չընդհատվող ափային գիծ, մինչև վոր կտրում ենք կիսագունդը և հասնում Աֆրիկայի ափերին։ Ձեվ այդ ընդարձակ տարածության վրա մենք չենք հանդիպում խիստ բնորոշ և տարբեր կինդանական աշխարհներին։ Թեպետ և շատ քիչ ծովային կինդանիներ են ընդհանուր Ամերիկայի արևելյան և արևմտյան ափերի և արևելյան ջաղաղ ավելիանասային կղզիների վերոհիշյալ յերկուք հարևան կինդանական աշխարհների համար, այնուհանդերձ շատ քիչ ձկներ են մտնում ջաղաղականից Հնդկականը ավելիանոսը և շատ քիչ փափկամարմիններ են ընդհանուր ջաղաղ ավելիանոսի արևելյան կղզիների և Աֆրիկայի արևելյան ափերի համար, վորոնք գտնվում են գրեթե հակառակ միջօրեականների վրա։

Ներքրոտող կարևոր փաստը, վոր մատնում է տրված ամփոփված ևր նախորդ ուվյալների մեջ, այդ այն է, վոր մինչև մայր ցամաքի համ ծովի ելակներն ազգակից են իրար, քեպետ և տեսակները զանազան մասերում և կայաններում կարող են տարբեր լինել։ Դա մի խիստ ընդհանուր օրինք է, վոր կարող հաստատվել ամեն մի մայր ցամաքի ուված բազմաթիվ ապացույցներով։ Բայց չնայած դրան, ընտանությը ճանապարհորդելով, օրինակ, հյուսիսից դեպի հարավ՝ մինչև էլ զարմանում ես, քեզ քնչպես մերձավորը, բայց տեսակային տարբերություններ ներկայացնող խմբերը հաջորդաբար փոխարինում են մեկը մյուսին։ Նա լսում է, վոր թռչունների մերձավոր ազգակից, բայց և տարբեր տեսակները միանման ձայնով են յերգում և տեսնում է, վոր նրանց բները նս նման են իրար, բայց ներկից կատուցվածքով վոչ բոլորովին նույնը և ունեն գրեթե միանման գույն։ Մագելլանի նեղուցի մոտ տարածվող հարթություններում ապրում է ամերիկական ջայլամի մի տեսակը (Nandou), իսկ Լա-Պլատայի հարթություն հյուսիսային մասերում ապրում է նույն տեսակին պատկանող մի այլ թռչուն, բայց վոչ իսկական ջայլամ (Struthio) կամ եմու (Dromaius), վոր ապրում են նույն լայնություն վրա Աֆրիկայում և Ավստրալիայում։ Լա-Պլատայի նույն հարթության վրա մենք տեսնում ենք ագուտի (Dasyprocta) և

վիսկաչ (Lagostomus), յերկու կնդպանիներ, վորոնք իրենց կնդպագոյ ջուռ նմանն են մեր նապաստակներին և ճագարներին և պատկանում են կրծողների կարգին, բայց իրենց հոբինվածքով յերևան են հանում ցայտուն ամերիկական տիպ։ Բարձրանալով Կորդիլերների բարձր գագաթները, մենք գտնում ենք ոչնաման վիսկաչի ալյանան մի տեսակ (Lagidium), իսկ ջրերի մեջ տեսնում ենք հարավ ամերիկական յերկու այլ կրծողներ, կոիպու (Myopotamus) և կապիբարա (Hydrochoerus) փոխանակ կուզրի և մուշտակաբեր արնչակի։ Կարելի յե բերել և այլ անհամար քանակությամբ որինակներ։ Ուրեմն, ամերիկական ափերի մոտ գտնվող կղզիների բնակիչները, ինչքան էլ այդ կղզիները յերկրաբանական կազմությամբ տարբեր լինեն, այդ միևնույն է, միշտ էլ ունեն ցայտուն ամերիկական տիպ, քանզի նրանց տեսակները տարբեր են համապատասխան կղզիների յուրահատուկ պայմաններին։ Դատելով հետազոտ անցյալից, ինչպես այդ ցույց է տրված տուն դրքի վերջին գլխում, մենք գտնում ենք, վոր ամերիկական տիպը պրոպագատող և ինչպես ամերիկական մայր ցամաքի վրա, այնպես էլ ամերիկական ծովերում։ Այս փաստերի մեջ մենք տեսնում ենք խորը որգանական կապ ժամանակի տարածության մեջ ցամաքի և կամ ջրի մի վորոշ շրջանում՝ անկախ նրա ֆիզիքական պայմաններից։ Մեզ այն բնախույզը, վոր չի աշխատի իմանալ, թե ինչ և նշանակում այդ կապը, նա ոժտված չի լինի ուսումնասիրության հակումով։

Այդ կապը վոչ այլ ինչ է, բայց յերեք ժառանգականության մի պարզ արտահայտություն, վորով, ինչպես այդ հաստատված փաստերը, պայմանավորվում է կամ իրար միանգամայն նման և կամ, ինչպես այդ մենք տեսնում ենք փոփոխականների մեջ, առավել կամ պակաս նմանություն ունեցող որգանիզմների յերևան գալը։ Ջննագան յերկրամասերի բնակիչների մեջ յեղած տարբերությունը պետք է վերագրել փոփոխականության և բնականընտրության ազդեցության տակ առաջացած փոփոխության և համապատասխան չափով զանազան ֆիզիքական պայմանների ազդեցության։ Յերկների մեջ յեղած վոչ նմանությունը պայմանավորվում է ներառում, քան ինչքան էրիվ չափով և կատեցվել տիրապետող ձևերի գաղթը մի շրջանից մի այլ շրջան առաջվել կամ պակաս հեռավոր գաղթաշրջանում, առաջին գաղթականների առանձնահատկությունների և քանակությամբ և տարա այն ներգործության, վոր վոր ունենում է բնակիչների

մի մասը մյուսների վրա զանազան փոփոխությունների պահպանման իմաստով, քանի որ գոյության կռվում որգանիզմների փոխհարաբերությունը, ինչպես այդ մենք բազմիցս նշել ենք, կարևոր կնճռապատմանն է հազվում։ Դաղիների ժամանակ խոշոր նշանակություն ունեն վերոհիշյալ խոչընդոտները, ելնելով այնպես, ինչպես ընտանի ընտրությունը գանձրալ պրոցեսի մեջ ունի ժամանակը։ Այդ առաջնությունն ունեցող և անհատների հարաբերությունները, որոնք իրենց անփափակ լայնատարած հայրենիքում արդեն հազիվ են իրենց բազմաթիվ սերունդներին, նրանք կունենան և նոր տեղեր գրավելու ամենամեծ հավանականությունները, յուրի ընկնելու լինեն նոր կերկիր։ Իրենց նոր բնակավայրերում նրանք ընկնելով նոր պայմանների մեջ՝ հաճախ կենդանարկվեն նորանոր փոփոխությունների և հարմարումների, որը հետևանքով և նրանք էլ ավելի ընդունակ կդառնան հազիվելու և առաջ կրնկերեն ձևափոխված հաջորդների խմբեր։ Հիմնվելով ժառանգականության այդ սկզբունքի և փոփոխականության վրա՝ մենք կարող ենք ըմբռնել այն սովորական և լավ հայտնի փաստը, թե ինչու կենդանատեսակները, սեռերը և նույնիսկ ամբողջ ընտանիքները իրենց տարածման մեջ սահմանափակված են լինում որոշ շրջաններով։

Ինչպես նկատել ենք վերևում, մենք չունենք անհրաժեշտ հատկանիշներ որոնք գոյության հաստատող և որչ մի ապացույց։ Եթե վերոհիշյալ փոփոխականության հատկությունը յուրաքանչյուր տեսակի անկախ առանձնահատկություններ և կարող է զանվել բնական ընտրության ազդեցության տակ, քանի դեռ նա ոգտակար է անհատին նրա գոյության բարդ կռվում, դրա համար էլ զանազան տեսակների փոփոխականության աստիճանը չի կարող միևնույն լինել։ Եթե որոշ թվով տեսակներ, որոնք կերկար ժամանակ իրենց հայրենիքում մրցել են իրար հետ, մասսայորեն զարգացած են մի նոր կերկրի, որ հետագայում մեկուսացման և կենդանարկվել, ապա նրանք չեն կարող խոշոր չափերով փոփոխվել, որովհետև որչ զարգը և որչ էլ մեկուսացումն ինքնին վերցրած չեն կարող առաջ բերել որոշ բան այդ ուղղությամբ։ Այդ գործոնները նշանակություն ունեն միայն այն դեպքում, երբ որգանիզմները դրվում են նոր հանգամանքների մեջ գլխավորապես միմյանց և նրան չափով շրջապատող ֆիզիկական պայմանների նկատմամբ։ Նման այն նման մի քանի ձևերին, որոնք, ինչպես տեսանք վերևից

գլխում, պահպանել են իրենց առանձնահատկությունները գրեթե անփոփոխ վիճակում չափազանց հեռավոր յերկրագնդական զանգվածներից ի վեր, այնպես էլ մի քանի տեսակներ տարածվել են ընդարձակ տարածություններ վրա գրեթե կամ բոլորովին փոփոխություններ չենթարկվելով։

Այս տեսակետներն համաձայն ակնհայտ են, վոր միևնույն տեսին պատկանող զանազան տեսակները, թեպետ և ապրում են յերկրագնդիս վրա իրարից խիստ հեռու ընկած մասերում, պետք է առաջացած լինեն մի տեղում, քանի վոր նրանք սկիզբ են առել մի ընդհանուր նախածնողից։ Այն տեսակների վերաբերմամբ, վորոնք յերկրագնդական ամբողջ զանգվածների ընթացքում շատ աննշան փոփոխություններ են կրել, դժվար չի ապացուցել, վոր նրանք տարածվել են մի շրջանից, վորովհետև հնագույն ժամանակներից ի վեր տեղի ունեցած խոշոր աշխարհագրական և կլիմայական փոփոխությունների ընթացքում, զաղթերը կարող էլին տեղի ունենալ գրեթե անսահմանափակ չափերով։ Բայց մի քանի դեպքերում, յերբ մենք հիմք ունենք կարծելու, վոր միևնույն տեսին պատկանող տեսակները առաջացել են համեմատաբար նոր ժամանակներում, այդ դժվարությունը շատ մեծանում է։ Ընչու այդպես ակնհայտ է, վոր միևնույն տեսակին պատկանող անհատները, թեպետ և ապրում են իրարից հեռու և մեկուսացած շրջաններում, պետք է մի տեղից դուրս յեկած լինեն, վորտեղ առաջացել են նրանց ծնողները, վորովհետև ընչպես այդ արդեն վերևում հաստատվել է, անհամամանական է, վոր իրար միանգամայն նման անհատները առաջացած լինեն տարբեր տեսակների պատկանող ծնողներից։

ՑԵՆԶԱԴՐՅԱԼ ՕՏԱՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք արդեն մոտեցանք այն հարցին, վոր բազմիցս քննության և առնվել բնախույզների կողմից, այսինքն՝ ընդհանուր յերևույթ է, վոր մի տեսակ տեղափվել և յերկրագնդի վրա մի տեղում, թե մի քանի տեղերում։ Ի հարկե, կան դեպքեր, յերբ չափազանց դժվար և հասկանալի, թե տեսակը ընչպես կարող եր մի տեղից տարածվելով՝ հասնել այն իրարից հեռու և մեկուսացած վայրերը, վորտեղ այժմ գտնվում են նրանք։ Այնուամենայնիվ այն տեսակները, վորի համաձայն յերևույթ տեսակ ընդհանում յերևան և յեկել միայն մի շրջանում, իր պարզությամբ

չափազանց դրամիչ և քիչում մեզ։ Մեզ նա, վոր ժխտում և այդ տեսակետը և հրաժարվում և ընդունել տվյալական բազմացման և նրան հաջորդող տարածման vera causa-ն, նա պետք և դիմի հրաշքի ոգնությանն։ Առնատարակ ընդունում են, վոր յուրաքանչյուր տեսակի շրջանը մեծ մասամբ լինում և մեկտարող, իսկ յերբ հինգանին կամ բուլյոր հանդես և գալիս յերկու այնպիսի հետևություն, վորոնք մեկ յանցից այնչափ են հեռացած և կամ անջատված են այնպիսի ընդհատ կրող անջրպետով, վոր խոչընդոտ կարող և հանդիսանալ տարածման տեսակետից, ապա այդպիսի դեպքը համարվում և արդեն զարմանալի և բացառիկ։ Ընդարձակ ծովային տարածությունը վրայով տեղափոխության կատարելու անընդունակությունը, քեռևս ցամաքային կաթնասունների համար ավելի աչքի զարնող յերևույթ և, քան վորևե այլ որգանիզմ և յուրի համար, բայց չնայած դրան մենք վոչ մի անբացատրելի բան չենք գտնում այդ բանում, յերբ մեկնում ենք կաթնասունները տեսնում ենք յերկրագնդի գանազան հետերում։ Վոչ մի յերկրաբան վոչ մի դժվարություն չի տեսնում այդ բանում, վոր Բրիտանական կղզիները ունեն նույնպիսի կաթնասուններ, ինչպիսի կաթնասուններ ունի Եվրոպան մեծացած մասը, վորովհետև կասկածից դուրս և, վոր Բրիտանական կղզիները և Եվրոպան մի ժամանակ միացած են յեղել միմյանց հետ։ Բայց յերթ մեկնում ենք տեսակը կարող և յերևան գալ յերկու տարբեր հետերում, ապա ինչու մենք չենք գտնում մի այնպիսի կաթնասուն, վոր միաժամանակ ապրեր Եվրոպայում և Ամերիկայում կամ Եվրոպայում և Հարավային Ամերիկայում։ Գոյություն ունեցող այդ յերկրամասերում այնքան նման են իրար, վոր յերկրագնդի հինգանիներից և բուլյերից շատերը նատուրալիստը յին յինքնարկվել քե Ամերիկայում և քե Ամերիկայում, և նույն իսկ մի քանի տեղական բուլյեր, վոր ապրում են հյուսիսային և հարավային կիսագնդերի այդ իրարից հեռու ընկած հետերում, միմանցմանց նման են։ Դրա պատասխանը, յես կարծում եմ, պետք և փնտրել այն բանում, վոր կաթնասունները անընդունակ են յերկար ընդհատված ընդարձակ տարածություններն վրայով տեղափոխություն կատարելու, մինչդեռ բուլյերը կատարել են այդ տեղափոխությունը շնորհիվ իրենց տարածման գանազան միջոցների։ Բազմազան կաթնասունների հակառակ և կարևոր նշանակությունը հասկանալի յե միայն այն դեպքում, յերբ մենք կանգնած ենք այն տեսակետի վրա, վոր տեսակները միաժամա-

նուքյունը լերևան և յնկել խոչընդոտի մի կողմում և անկարող և յեղել անցնել հակառակ կողմը։ Մակավարքիվ ընտանիքներին, շատ յննքաբնտանիքներին, շատ մեծ թվով սեռերի և ել ավելի մեծ թվով յննթատեռերի համար հատուկ և ունենալ բնակության համար մի առանձին շրջան. բացի դրանից, շատ բնախուլյունը նկատել են, որ ամենաքնական սեռերը, այսինքն այն սեռերը, որոնց սեռակինները շատ սերտ ազգակցություն ունեն մեկյանց հետ, սովորաբար ապրում են մի առանձին շրջանակում կամ յնթե ունեն ընդարձակ տարածություն, ապա գրավում են ընդհատումներին չննթարկված շրջաններ։ Շատ տարորինակ բան կլիներ, յնթե դրա մեխանիզմային հակատակը նկատվեր այն դեպքում, յերբ մենք իմանալով շատերի ավելի ցածր մասերին՝ հասնելինք մինչև սեռակին պատկանող անհատներին և հանկարծ տրանք, գոնե սկզբում, տահմանափակված չլինելին մի որոշ շրջանում։

Այս խոր պատճառով ել, ինչպես շատ ուրիշ բնախուլյուններին, այնպես և քնձ, թվում է, որ այն սեռակները պիտի համարել ամենատարածվածները, որոնք համաձայն յուրաքանչյուր սեռակ յերևան և յնկել սկզբում մի շրջանում և ապա այնտեղից տարածվել այնքան հեռավոր վայրեր, ինչքան այդ թուլ են տվել նրա տարածման միջոցները և անցյալ ու ներկա ժամանակների պայմանները։ Անկասկած և, որ կան շատ դեպքեր, յերբ մենք չենք կարող բացատրել, թե ինչպես մի թնեռուլն սեռակը կարողացել և մի վայրից ընկնել մի այլ վայր։ Մակայն աշխարհագրական և կլիմայական փոփոխությունները, որոնք անպայման տեղի յին ունեցել վերջին յերկրաբանական դարաշրջաններին ընթացքում, կարող յին ընդհատուն ջրել շատ սեռակների համար սկզբում միատարար յեղած շրջանները։ Այսպիսով մենք պետք և քննություն առնենք այն խնդիրը, թե իրոք այնքան շատ և այնքան կարևոր են յեղել իրենց նշանակությամբ բացատրությունները այն դանդների, որոնք համաձայն յուրաքանչյուր սեռակ ունեն իր տարածման միատարար շրջանն, որ կարողանան հարկադրել մեզ հրաժարվել վերոհիշյալ դիտողությունների հիման վրա համընդհանուր համարվող սեռակներից, որ յուրաքանչյուր սեռակ առաջացել է մի շրջանում և տարածվել այնտեղից այնքան հեռավոր վայրեր, ինչքան այդ հնարավոր է յեղել։ Հարկն չափազանց ձանձրալի կլիներ, յնթե մենք քննություն առնելինք բոլոր առանձին դեպքերը, յերբ այժմ ապրող սեռակները գրավում են զանազան միմեռացած շրջանները, և յես վոչ

մի վայրկյան չկարողանա պնդել, որ մի քանի դեպքերի համար կարող է գոհացուցիչ բացատրություն տրվել Մակայն վորոշ նախնական դիտողություններից հետո կարելի կառնենք մի քանի չափազանց ուշագրավ փաստերի խմբեր, այդ է՝ նախ միևնույն անասնի գոյությունը իրարից խիստ հեռու գտնվող կլիմայական պայմանների ազդեցության տակ, երկրորդ (հետևյալ գլխում)՝ անուշահամ ջրերում ապրող ձկնատեսակների ծագումը և երրորդ՝ միևնույն ցամաքային անասունների գոյությունը կղզիների և ամենամոտիկ մայր ցամաքների վրա, վորոնք երբեմն անջատված են միմյանցից հարյուրավոր մղոն տարածության ունեցող բաց ծովերով։ Ամեն միևնույն անասնի գոյությունը երկրագնդի վրա միմյանցից հեռու ընկած և միևնույնս երկու հետևություններ կարող է վորոշ դեպքերում բացատրվել այն տեսակետով, վոր յուրաքանչյուր տեսակ տարածվել է մի հիմնական վայրից, ապա ինչևիցե ազդեցությունների շնորհիվ անցած կլիմայական և աշխարհագրական փոփոխությունների վերաբերմամբ մեր ունեցած անտեղյակությունը և տարածման պատահական դեպքերի մասին, անշուշտ այդ դատողությունը, վորին համաձայն յուրաքանչյուր տեսակի տարածման հիմնադրումն միանամանակությունն ընդունք են, պետք է համարվի անհիմնական ամենուրեք։

Ինձ թվում է, որ այդ հարցը՝ մենք միանամանակ պետք է կանգ առնենք մեզ համար մի շատ կարևոր հետևության վրա, այն է՝ կարծիք եմ արտայտք մի տեսակ պատկանող զանազան տեսակների, վորոնք մեր տեսության համաձայն առաջացել են մի ընդհանուր նախահայրից, տարածվել մի վորևէ շրջանից՝ ներթափանցվելով տարածման ժամանակ մի այս կամ այն փոփոխությունների։ Եթե հնարավոր լինի ապացուցել, վոր մի երկրի մեջ ապրող տեսակները մեծ մասը տարբերվում են մի այլ երկրի տեսակներից, քիանալու և մոտիկ ազգակից տեսակներից և միաժամանակ ապացուցել, վոր մի շատ հին գարաշրջանում գտնվի և տեղի ունեցել մի երկրից մյուսը, առանց զգալի կերպարով հնարավորության մեր ասած ներգաղթության, ապա զգալի կերպարով հնարավորության մեր ասած ներգաղթության, քանի վոր այդ դեպքում պետք է երևույթը բացատրվի հաջորդական փոփոխությունների վրա հիմնված ծագման սկզբունքով։ Ուրեմն, հետազոտելով կղզիները, վորոնք բաբեթացել և առաջացել են մայր ցամաքից մի քանի հարյուր մղոն հեռավորության վրա, վորոշ ժամանակից հետո, հավանորեն, կարող էինք առանձին նրանց չնչին քանակությամբ կոլոնիաներ, և վերջիններիս տերունդները, քիանալու և փոփոխված

վիճակուած, կարող են ժառանգական ազգեցութեան տակ պահպանել նմանութեան գծերը մայր ցամաքի բնակիչների նմանութեան նման զեղքերը սովորական են և, ինչպես մենք կտեսնենք հետագայում, անբացատրելի չեն անկախ ստեղծագործութեան տեսակետից։ Մի կերկրի տեսակների մի այլ կերկրի տեսակների հետ ունեցած ազգակցութեան վերաբերմամբ չեզած այսպիսի տեսակները եկամանուին չի տարբերվում Ռուլենի կարծիքից, որ կիկիլ և այլ չեզրակացութեան, թե Հյուրաքանչիւր տեսակի ծագումը սերտ առնչութեան մեջ է գտնվում ժամանակի և տարածութեան տեսակետից իրեն նախորդող մերձավոր տեսակների հետ։ Այժմ արդեն լավ հայտնի չի ամենքին, որ նա այդ առնչութիւնը բացատրում է փոփոխութիւններին վրա հիմնված ընդհանուր ծագման մի։

Մենք թե մի քանի ստեղծագործութիւնների կենսաբանների գործքից հարցը պետք է տարբերել մի այլ, թեպետ և շատ մերձավոր բնոյթ ունեցող հարցից, այսինքն, ինչպես միևնույն տեսակին պատկանող բոլոր անհատներն առաջացել են մի զույգից, մի հերմաֆրոդիտ անհատից, թե, ինչպես կենթադրում են մի քանի հեղինակներ, միաժամանակ ստեղծված շատ անհատներից։ Այնպիսի որգանիզմների մոտ, որոնք բնակեսավորութիւն կարիք չեն զգում, ինչպես միաչիր կան այդպիսիները, Հյուրաքանչիւր տեսակ կարող է առաջանալ փոփոխականների հաջորդական փոփոխութիւնների միջոցով, փոփոխականների, որոնք միևնույն զուգ են ազում հրատապրակից, բայց կերբեք չեն խառնվում միևնույն տեսակի անհատների հետ, այնպես որ փոփոխութիւն Հյուրաքանչիւր հաջորդական աստիճանի վրա այդ ձևի բոլոր անհատները կարող են առաջացած լինել մի ծնողից։ Սակայն ընդհանրապես, այսինքն այն բոլոր զեղքերում, երբ Հյուրաքանչիւր ծնողի նախորդում և բնակեսավորութիւն և երբ զանազան անհատների խաչաձևումը տեղի չի ունենում պատահականորեն, մի տեսակի անհատները, որոնք ապրում են մի շրջանում, պետք և պահպանեն իրենց մոտավոր միանմանութիւնը խաչաձևման չնորհիվ, գրա համար էլ շատ անհատներ պետք և կենդանակերպ միաժամանակյա փոփոխութիւն և փոփոխութիւնների գումարը Հյուրաքանչիւր աստիճանի վրա չի կարող առաջացած լինել մի զույգ ծնողներից։ Բացատրենք մեր միտքը մի որինակով. մեր անգլիական վայրքի ձին տարբերվում է ձիերի բոլոր մյուս ցեղերից, բայց իր առանձնահատկութիւններով

և իր գերապանցությամբ պատկանում է նա վոչ թե մի զուտիպ, այլ միջտական ընտրությանն և ամենն մի սերնդի մեջ չատ անհատների վարժությանն։

Նախքան այն յերկը կարգի փաստերի քննության անցնելը, վոր յես ընտրել եմ վորպես էտեղծագործության միակ կենտրոնական տեսության տեսակետից ամենից մեծ դժվարություններ ներկայացնողներ, յես պետք է մի քանի խոսք ասեմ տարածման յեղանակների մասին։

ՏԱՐԱԾՄԱՆ ԵՅԼԱՆԱԿՆԵՐԸ

Այս հարցը արդեն քննության են առել սըր Չ. Լայելլը և այլ հեղինակներ։ Այստեղ յես կարող եմ տալ միայն մի համառոտ քաղվածք ամենակարևոր փաստերից։ Կլիմայական փոփոխությունները պետք է ամենազորավոր ներգործություն ունեցած լինեն որգանիզմների տեղափոխությունների վրա։ Մի յերկիր, վոր այժմ իր կլիմայի պատճառով վորոշ որգանիզմների համար անանցանելի յե համարվում, մի այլ կլիմա ունեցած դեպքում կարող է գաղթերի մեծ ուղի յեղած լինել։ Բայց հարցը այս կողմի վրա յես այստեղ փոքր ինչ մանրամասն պիտի կանգ առնեմ։ Ցամաքի մակերևույթի բարձրության վերարերմամբ տեղի ունեցած փոփոխությունները նույնպես կարող են մեծ հետևանքներ ունենալ։ Նեղ պարանոցն այժմ բաժանում է յերկու ծովային կենդանական աշխարհներ միմյանցից, բայց յերբ այդ պարանոցը սուզվի ջրի տակ և կամ յերբ նա սուզված և յեղել ջրի տակ առաջները, տակ այդ դեպքում յերկու կենդանական աշխարհները կարող են խառնվել իրար հետ կամ կարող են խառնված լինել առաջները։ Այնտեղ, վորտեղ այժմ ծով և տարածված, կարող և մի ժամանակ ցամաք յեղած լինել, վոր միացրել և Հիդինները և նույնիսկ մայր ցամաքները միմյանց հետ և այդպիսով հնարավորություն տվել նրանց բնակիչներին մի կողմից մյուսը գնալու։ Ծերկրաբաններից վոչ վոք այլևս վիճելի չի համարում, վոր ներկայում ապրող եյակների գոյության ընթացքում ցամաքի մակերևույթի բարձրության մեջ տեղի յեն ունեցել խոշոր փոփոխություններ. Եդուարդ Ջորջը պնդում է, վոր Ատլանտյան ովկիանոսի կղզիները վոչ չատ հին ժամանակներում միացած են յեղել Աֆրիկայի կամ Ամերիկայի հետ քիչ-ակա և Ամերիկան իր իր հերթին միացած է յեղել Ասիայի

հետո Այլ հեղինակներ այդ յենթադրությունը տարածել են գրեթե բոլոր ովկիանոսների վրա և համարյա թե բոլոր կղզիները միացրել են այս կամ այն մայրցամաքի հետ Ցնով խնդրանս, յերեք հիմն են Տորքսի քերած ապացույցները, ապա պիտի ընդունենք, որ հազիվ թե գոնվի մի կղզի, որ վոչ այնքան հին ժամանակներում միացած չլիներ վորևե մայրցամաքի հետ Այս տեսակետը լուծում է՝ մինչև այն տեսակի իրարից շատ հեռու ընկած վայրերում տարածված լինելու գորշյան հանգույցը և վերացնում է շատ դժվարություններ Բայց իմ կարծիքով, մենք իրավունք չունենք ընդունելու, որ այժմ ապրող տեսակների գոյության ընթացքում տեղի են ունեցել այդպիսի հսկայական աշխարհագրական փոփոխություններ Ինձ թվում է, որ մենք ունենք ծովի և ցամաքի մակերևույթի բարձրության շուրջ տատանումների վերաբերմամբ բազմաթիվ ապացույցներ, բայց վոչ մայրցամաքների դիրքի և չափերի մասին, որոնց հիման վրա կարողանայինք նորագույն շրջանում միացնել նրանց ինչպես միմյանց հետ, այնպես և նրանց արտաքներում գտնվող ովկիանոսային կղզիների հետ Ցնս սիրով ընդունում եմ, որ առաջները յեղել են կղզիներ, որոնք այժմ ստորվել են ծովի մեջ և որոնք մի ժամանակ իրրև կայան են ծառայել շատ բուսերի և կենդանիների հետագա տարածման համար Գորշյան կղզիներ ունեցող ծովերում այդպես ստորված կղզիներն այժմ աչքի յեն ընկնում ծովի մակերևույթի վրա յեղած կորալային ողակներով կամ ատոլլներով։ Ցնքի միանգամայն ընդունելի յե և այդ մի որ կընդունվի անկասկած, վոր յուրաքանչյուր տեսակ ունեցել է իր ծննդավայրը և յերե մեզ համար ժամանակի ընթացքում կպարզվի նաև որպանիզմների տարածման միջոցները, այն ժամանակ մենք իմիճակի կլինենք ցամաքի գրաված տարածություն մասին ավելի վորոշակի տպավորություններ անել, Գրան հակառակ յես չեմ կարծում, վոր յերբևե կարող է ապացուցվել, թե մայրցամաքների մեծ մասը, վորոնք այժմ բոլորովին անջատված են միմյանցից, առանց ընդհատումների և կամ գրեթե առանց ընդհատումների միացած են յեղել միմյանց և այժմ ովկիանոսային շատ կղզիների հետ Որպանիզմների տարածման վերաբերյալ մի քանի փաստեր, ինչպես նաև, որինակ, համարյա թե ամեն մի մեծ մայրցամաքի հակառակ կողմերում տարածված ծովերի կենդանական աշխարհների մեջ յեղած խոշոր տարբերությունը. շատ յերկրների, նույնպես և ծովերի յերբեք-

դական շրջանի ընտանիքների և նրանց այժմյան ընտանիքների միջև կեզած մոտ ազգակցությունը, կղզիների և նրանց մոտ գտնվող մայր ցամաքի կամքնատունների միջև կեզած ազգակցական առնչությունը, (որը ինչպես միանգամ կտեսնենք հետագայում) մասամբ վերոշվում է նրանց սրտանգում տարածված ովկիանոսի խորհրդյատը այս և սրանց նման այլ փաստեր հանգամում են աշխարհագրական հանյսական փոփոխությունների նորագույն շրջանում, որոնք անհրաժեշտ են Դարվինի տեսակների ծագման վերա հետևությունների կողմից ովկիանոսային կղզիների բնանիքների առանձնահատկությունները և թվական հարաբերությունը նույնպես ցույց են տալիս, որ այդ կղզիները միացած չեն եղել մայր ցամաքների հետ։ Այդ կղզիների բացառապես հրաբղխային ծագումն ունենալը նույնպես չի խոսում հակառակ այն կենդանաբանական, որ իրր թե նրանք ներկայացնում են անհետացած մայր ցամաքների մնացորդները, որովհետև կան նրանք լինելին մայր ցամաքների լեռնաշղթաների սկզբնական գագաթները, ապա նրանցից գոնե մի քանիսը պետք է ունենային նման բազմազան լինելին գրանիտից, մետամորֆիկ թերթաքարերից, հին որգանական մնացորդներ պարունակող շերտերից և այլն և այլն որ բացառապես հրաբղխային ծագումն ունեցող քարտեսակներից։

Այժմ կես պիտի մի քանի խոսք ասեմ որգանիզմների տարածման այսպես կոչվող ազատահակատ կեդանակների մասին, ըստ որում պիտի բավականանամ միայն թռչունների նախնական պատասխանների մեջ այս կամ այն թռչունը սերմերը լայն կերպով տարածելու տեսակետից համարվում և հաճախ վատ համարվում, իսկ ինչ վերաբերում է ծովի վրայով տարածվելու հարցին, ապա կարելի չի ասել, որ թռչունների մեջ այդ ընդունակությունը համարյա բի բոլորովին անհայտ է։ Բայց դեռ կես միասին Բ ն ա կ ւ ե ն ի ն ոչնչությամբ չեկել կատարել մի քանի փորձեր, անհայտ են մնացած նույնիսկ այն հանգամանքը, թե տերևների ինչքան ժամանակ կարող են դիմանալ ծովային ջրի վրա առանց ներծծելու իրենց մեջ։ Ես մեծ փորձեր եմ արել 87 սերմերից 64-ը կարողացան մնալ 28 որ ծովային ջրում։ Միայն հետո, իսկ մի քանիսը կարողացան դիմանալ նույնիսկ 137 որ։ Պետք է ասել, որ մի քանի կարծրը սերմերը շատ են ջրասիրում, քան մյուսները. փորձի համար վերցված բոլոր տեսակի լոբազգի բույսեր բացառությամբ մեկի լավ չկարողացան տանել ծովային

ջրի ներգործությունը. Hydrophyllaceae և Polemoniaceae-ի լոքմանրծամոր կարգերի սերմերը փչացան մի ամիս ծովային ջրում մնալուց հետո։ Հարմարությունից տեսակետից, յուն փորձի համար վերցրել են պլատմոդատես մանր սերմեր առանց տուփիկների և պտուղների և նրանք բոլորն էլ մի քանի որից հետո սուզվեցին ջրի տակ, նշանակում է, նրանք չեն կարող ծովում երկար տեղ լողալ, անկախ այն հանգամանքից, որ սրի չուրն ունի նրանց վրա։ Դրանից հետո յուն վերցրել մի քանի խոշոր պտուղներ, տուփիկներ և այլն, և նրանցից մի քանիսը մնացին ջրի յերեսին բավական յերկար ժամանակ։ Լավ հայտնի յե, թե ինչքան մեծ տարբերություն կա թարմ և չոր փայտի մեջ լուղոզության տեսակետից, և իմ մեջ միտք ծագեց, որ ջրի ալիքները հաճախ կարող են դեպի ծովը տանել չոր բույսերը կամ նրանց ճյուղերը վրան յեղած սերմերի և պտուղների հետ միասին։ Դրա համար էլ յես վճռեցի չորացնել 94 տեսակի բույսերի հասունացած պտուղներ ունեցող ցողուններ և ճյուղեր և դնել ծովային ջրի մեջ։ Նրանց մեծամասնությունը չուռաով սուզվեց ջրի տակ, բայց մի քանիսը, նույնիսկ հատապտուղները մի կարճ ժամանակ լող տվեցին ջրի վրա, իսկ չորերը լող տվեցին բավական յերկար ժամանակ։ Այսպես որինակ, հասած անտառային կաղինն անմիջապես սուզվեց ջրի տակ, իսկ չորացրածը լող տվեց 90 որ շարունակ և հետո հողի մեջ դնելուց հետո, ծլեց. հասունացած պտուղներ ունեցող ծնեբեկայինը բույսը լող տվեց 33 որ, իսկ չորացրածը՝ 85 որ, վորից հետո նրա սերմերը սյունասմենատնիվ կարողացան ծլել։ Helosciadium-ի հասունացած սերմերը յերկու որից հետո սուզվեցին ջրի տակ, իսկ չորացրած սերմերը լող տվեցին 90 որից ավելի և դրանից հետո էլ կարողացան ծլել։ Ընդհանրապես 94 տեսակի չոր բույսերից 18-ը լող տվեցին 28 որից ավելի և այդ 18-ից մի քանիսը նույնիսկ չատ ավելի յերկար ժամանակ։ Ցեղ վորովհետև վերցրած սերմերի $^{64}/_{87}=0,74$ մասը կարողացան ծլել ջրում 28 որ մնալուց հետո և հասունացած սերմեր ունեցող զանազան տեսակի բույսերի $^{18}/_{94}=0,19$ մասն էլ (բայց մոտավոր այլ տեսակներ, քան վերցված և յերկար նախորդ փորձի ժամանակ) կարողացավ լող տալ նախապես չորացնելուց հետո 28 որից ավելի, ապա դրանից կարող ենք հետևցնել, (ինչքան հնարավոր և հետևություններ անել այդ աղքատիկ տվյալների հիման վրա), վոր վորևե յերկրի բուսական տեսակների $^{14}/_{100}$-ի սերմերը կարող են ծովի վրա տարվել հոսանքի ազ-

գնցուքյան տակ 28 որ ջարունակ և պահպանել իրենց ծլունակությունը։ Ջոնստոնի ֆիզիքական տալասի մեջ Ասլանեանյան ավկխանոսի գանազան հատանքների մինչեւ արագությունը ցույց է տրված որակաև 33 մղոն (մի քանի հատանքների մինչեւ արագությունը հասնում է 60 մղոնի)։ Եկեղեցով այս բոլորից՝ մենք կարող ենք ասել, որ վորևե յերկրի բուսական տեսակները 0,14 մասի սերմերից կարող են տարվել ծովի վրայով 924 ծովային մղոն տեղ գնալի մի այլ յերկիր և հասնել նրա ափին, վորից հետո քամու միջոցով յերեն ընկնելն վորևե բարենպաստ տեղ, կարող են ծլել։

Ինձանից հետո նման փորձեր կատարել է Մարտենսը, բայց ավելի լավ ձևով, քան յես, վորովհետև նա սերմերը ածելով փոքրիկ արկղների մեջ՝ գցել է իսկական ծովի մեջ, այնպես վոր ալիքները ստամենայնպես խոնավացրել են և յենթարկվել ոդի ներգործությանը, ինչպես ծովի մեջ լողացող բույսերը։ Փորձի համար նա վերցրել է 98 տեսակ սերմեր մեծ մասամբ իմ վերցրածներից տարբեր, ի միջի այլոց վերցրել է նա և մի քանի հատ խոշոր պտուղներ և այնպիսի բույսերի սերմերից, վոր ապրում են ծովի մոտերքը, մի հանգամանք, վոր կարող եր նպաստավոր ազդեցություն ունենալ քիչ ներանց լողալու տևողության վրա և քիչ աղացրի ջրասակալ ներգործության դիմադրության ցույց տալու վրա։ Սակայն նա նախապես չէր չորացրել բույսերը և վոչ էլ պտուղներ ունեցող ճյուղերը, վորը, ինչպես տեսանք, ներանցից մի քանիսի լողալու տևողությունը կարող եր յերկարացնել։ Հետևանքում փորձի համար վերցրած գանազան տեսակ բույսերի սերմերի $^{18}/_{98} = 0,185$ մասը ծածկել է ջրի մեջ 42 որ և այդքան ժամանակից հետո պահպանել է իր ծլելու ընդունակությունը։ Սակայն յես չեմ կասկածում, վոր ալիքների շնորհիվ առանձ արագ բույսերն ավելի քիչ տեղ լողային, քան ուժեղ ջարժումներից պաշտպանվածները, ինչպես յերեվել են ներանք մեր փորձերի ժամանակ։ Այս իմն պատճառով էլ քիչ ևս չենք կարծում, յեթե ընդունենք, վոր վորևե բուսականության տեսակների 0,1 մասը չորացումից հետո կարող է լողալով անցնել ծովի վրայով 900 մղոն տարածություն և ապա ծլել։ Հետաքրքրական է այն հանգամանքը, վոր խոշոր պտուղները հաճախ ավելի յերկար են լողանում, քան փոքրները, վորովհետև մեծ պտուղներ կամ սերմեր ունեցող բույսերը, վորոնք ինչպես ցույց են տվել Ալֆ. դը-

կանդուլը, ուներն ընդհանրապես տարածման նեղ շրջաններ, մի տեղից տարվում են մի այլ տեղ հազիվ քիչ մի այլ միջոցով։

Սերմերը կարող են տարվել և այլ կերպանակով։ Լողացող ծառերը դուրս են գալիս կղզիներից ցատերի վրա, նույնիսկ այնպիսիների վրա, որ ընկած են բաց ովկիանոսի միջին մասերում։ Ջաղաղ ովկիանոսի կորալյան կղզիների բնակիչները իրենց գործիքների համար անհրաժեշտ պինդ քարերը գտնում են քացատապես լողացող ծառերի արմատների ոլորանքներում, այդ քարերն են կազմում հիշյալ կղզիների քարափների չկիսամոխ զգալի մասը։ Սերմ այդ քարերն անկանոն ձև են ունենում, այդ դեպքում նրանք այնպես են խրվում ծառերի արմատների ոլորանքները, որ նրանց անհարթություններն և փոսերի մեջ ընկած հողամասնիկները, ինչպես ցույց են տվել իմ հետազոտությունները, պինդ կերպով կպած մնում են նրանց չկրկար ճանապարհի ամբողջ ընթացքում։ Սեզ չեն միանգամայն համոզված եմ այն դիտողության ճշտության, որ հողի մի փոքրիկ քանակության մեջ, որ բոլորովին թաղնված վիճակում գտնվել և մատավորապես հինուն տարեկան մի կաղնու արմատների մեջ, պահպանվել են սերմեր, որոնցից դուրս են չկիել չորեք բուսեր։ Բացի դրանից, կարող եմ նաև հաստատել, որ ծովի մեջ ընկած թռչունների դիակները, չորքսին չորկար ժամանակ մնում են առանց կլանվելու, իսկ այդպիսի լողացող դիակների կտամաններում գտնվող սերմերը շատ չորկար ժամանակ պահպանում են իրենց ծլունակությունը. սիսեռն ու վիկը, որոնք, մեզով ծգվային ջրի մեջ ընդամենը մի քանի որ, փչանում են, բայց չորսուն որ ծովի վրա լող տված ազռավնու դիակի կտամաններից հանվելուց հետո, է մեծ զարմանա իմ, կարողացել են դրեթե բոլորը ծլել։

Գեղեցան թռչունները նույնպես մեծ մասնակցություն են ունենում սերմերի տարածման գործում։ Սես կարող եմ քվել բազմաթիվ դեպքեր հաստատելու համար, որ գանազան տեսակի թռչուններ հողմերից հաճախ տարվում են ովկիանոսների վրա շատ հեռավոր տարածություններ։ Մենք կարող ենք առանց տատանվելու ընդունել, որ նման պայմաններում նրանց թռիչքի միջին արագությունը հաճախ հասնում է մի ժամում 35 մղոնի, թեպետ մի քանի հեղինակներ ավելի մեծ քվեր են տալիս։ Սես դեռ չեմ տեսել, որ անդադար սերմերը ամբողջովին անցնելին թռչունի մարսողական խողովակի մեջ, բայց պտուղների ուսուց

անբմները անվնաս կերպով անցնում են նուշինակ հնդկահավի մարտազակաղ գործարաններին միջով։ Ներկու ամսվա ընթացքում կես իմ այդում փոքրիկ թռչուններին արատաթռուցիկությունների մեջ գտել եմ 12 տեսակ բուսակեր անբմներ, որոնք ծառեր չեն անվնաս վիճակում և նրանցից մի քանիսը փորձի ժամանակ կատղացան ծելու։ Բայց հետևյալ փաստն ուշի առանձին նշանակություն. թռչունների կտամաները չի արատագրում իրենից առաջ մոքսային հյուսի, և կես ինչքան գիտեմ փորձերից, նա վոչ մի յուատակար ազդեցություն չի ունենում անբմների ծլունակության վրա, բայց յուրի թռչունը միանգամից մեծ քանակությամբ անբմներ և կլանում, առաջ այդ գեղքում, ինչպես հայտնի կի, անբմները առանձնակու և նուշն իսկ առանուի ժամից ավելի չուտ չեն սկսում առաջքը։ Այդ ժամանակի ընթացքում թռչունը կարող և առրվիլ առրող 500 մղոն առրաձուցիկություն. գիշատիչները, ինչպես գիտենք, փորում են հոգնած թռչուններին և նրանց պատառատած կտամաններին միջի նյութերը հեշտությամբ կարող են գտնել քամվելու։ Մի քանի ցերեկային գիշատիչ թռչուններ, նուշնպես և բզիերը, կլանում են իրենց վորան ամբողջությամբ և ապա առանձնակու կամ քանի ժամից հետո բզկտում անմարսելի նյութերը բերանից դուրս քաշում. ահա այդ դուրս քաշած նյութերի մեջ, ինչպես կես գիտեմ կենդանաբանական այգիներում կատարած իմ փորձերից, պարունակում են իրենց մեջ ծլունակ անբմներ։ Մի քանի գեղքերում վարսակը, ցորենը, կորնկը, կանարյան թռչունի կտիկը, կանեփը, առվուտը և հակնդեղը ծելել են գանազան տեսակի գիշատիչ թռչունների ստամոքսի մեջ առանձնակուից մինչև քանի՛ ևմեկ ժամ ետևում հետո. հակնդեղի գեղկու հետ անգամ ծել են արձակել թռչունի ստամոքսում գեղկու որ և առանձնակ ժամ ետևում իմ գիտողությունները ցույց են ավել, վոր քաղցրահամ ջրերում ապրող ձկները ուտում են քիչ ցամաքային և քիչ ջրային բուսատեսակ անբմներ և ապա իրենց հնարքին կեր են դնում թռչուններին. ահա այս ճանապարհով նոր անբմները կարող են տեղափոխություններ կատարել։ Ես փորձի համար վերած ձկներին ստամոքսի մեջ մտցրել եմ գանազան տեսակի բուսական անբմներ և ապա այդ ձկները տվել ձկնեկեր գիշատիչներին՝ արատիլներին. մի քանի ժամից հետո այդ թռչունները նուշն անբմները դուրս են քաշել կամ արատաթռուցիկությունների և կամ բերանից հանած նյութերի հետ, քանի վորում անբմների մի մասը կարողացել և պահպանել իր ծլունակությունը,

քեպեռ մյուսներն այդ գործողության ժամանակ բոլորովին անպիտաքացել են։

Մոբիլը յերբեմն հողմից ցամաքից տարվում է դեպի ծովը անապին տարածությամբ սեղ. յես ինքս բռնել եմ մի մոբիլ Աֆրիկայի ափից 370 մղոն հեռավորության վրա և լսել եմ, վոր ուրիշները բռնել են ել ավելի մեծ հեռավորության վրա։ Ր. Տ. Լոուն հայտնում է Զ. Լայելլին, վոր 1844 թվի, նոյեմբերին մոբիլների անապին մի բազմություն այցելել է Մադեյրա կղզին. նրանք քոչում էին արևելքի խառնությամբ, ինչպես ձյունի փաթիլները խիստ բուք ժամանակ և դեպի վեր տարածվում էին արևքան բարձր, վոր տեսնելու համար պետք եր դիմել հեռադիտակի ոգնությանը։ Ցերկու-յերեք որ շարունակ նրանք դանդաղ կերպով տարվում էին մի հակայական ելիպսիսով տաճվաղն 5—6 մղոն տրամագծով, իսկ գիշերը իջնում էին բարձր ծառերի վրա, վորոնք բոլորովին ծածկվում էին նրանցով։ Բայց այդ մոբիլներն քոչելով դեպի ծովը՝ անհետացան, նույնքան անսպասելի կերպով, ինչքան անսպասելի յեր և նրանց յերևալը. և նրանից հետո այլևս չայցելեցին կղզին։ Նոտալի յերկրի մի քանի մասերում ֆերմերները կարծում են, քեպեռ և վոչ բավարար հիմունքներով, վոր ջասակար սերմերը քափվում են իրենց մարգագետիններին վրա այն արտաքորությունների միջոցով, վոր քողնում են իրենցից հետո մոբիլները մեծ յերամներով, վորոնք այնքան շուտ-շուտ այցելում են իրենց յերկիրը։ Այդ յենթադրության հիման վրա միստր Ռ. Լը ուղարկեց ինձ մոբիլների արտաքորությունների չոր կտորների մի փոքրիկ կապոց. յես խոշորացույցի միջոցով նրանցից դուրս հանեցի մի քանի հատ սերմեր և ամեցրի նրանցից յոթ հատ խոտաբույսեր, վորոնք պատկանում էին յերկու տեսակների։ Նշանակում է, Մադեյրան այցելողների նման մոբիլները կարող են տարածել մայր ցամաքի հետևյալ կղզու վրա բուսական դանազան տեսակների սերմեր։

Քեպեռ քոչունների կուռքն ու վոտները սովորաբար մաքուր են լինում, բայց յերբեմն նրանց կպչում են հողի մասնիկներ. այսպես որինակ, մի անգամ մի կաքավի վոտներից յես պոկեցի 61, մի ուրիշ անգամ ել 22 զրամ չոր կավային հող և այս հողի մեջ կար վիճակի սերմերի մեծ քանակություն, վորոնք ծլեցին։ Ել ավելի լավ դեպք կարող եմ ասել. իմ ընկերներից մեկին ուղարկել եր ինձ մի վալդշնեպ, վորի ոտքերին կպած եր

հողի մի փոքրիկ կտոր, ընդամենը իրեն գրամ ծանրութեամբ. բայց նրա մեջ կար Juncus bufonius բույսի մի սերմ, որը հետո ծլելով՝ տվել է ծաղիկներ. Բրայտոնցի միտքը Սվենյանդը, որը վերջին քառասուն տարվա ընթացքում ուշադիր հետևում է մեր չվող թռչուններին, հաղորդում է, որ իրեն հաճախ պատահել է խաղտաղնիկներ (Motacillae), մարգագետնային թռչուններ և saxicolae-ներ նախ քան նրանց անդլիական հողի վրա իջնելը և շատ անգամ նկատել է, որ նրանց ոտների վրա կպած են հողի փոքրիկ կտորներ. Հաստատելու համար, որ սովորաբար հողը իր մեջ սերմեր է պարունակում, կարելի է քննել բազմաթիվ փաստեր. Այսպես օրինակ, պրոֆ. Նյուտոնն ուղարկել է ինձ մի կարմրատուռնք կաքավի (Caccabis rufa) ոտ, որը վիրավորված լինելով չեր կարողացել թռչել. Նրա ոտքին կպած եր շատ հողի մի կտոր $6^1/_2$ ունցիա ծանրութեամբ. Այդ հողը պահվել եր յերկաք տարի, որ հետո, յերբ փշրել, թացացրել և պետրիական պատկյա պանդակի տակ, նրանից դուրս են յեկել 82-ից վեչ պակաս բույսեր. դրանց մեջ յեղել են 12 միապաղաղ բույսեր, որոնց մեջ յեղել է մի հատ սովորական վարսակ և ամենաքիչ մի խոտաատիճակ և 70 յերկշաքիլ բույսեր, որոնք պատկանում եյին, ինչքան կարելի յեր դատել նրանց ծիլերից, յերկաք պանդանան տեսակներին. Ի նկատի առնելով այսպիսի փաստեր, կարելի յե ապշյոք կասկածել, որ ահագին քվով թռչուններ, որոնք ամեն տարի հողմերի միջոցով ովկիանոսի վրայով տարվում են ահագին տարածութեյուններ կամ որոնք ամեն տարի կանոնավոր կերպով տեղափոխութեյուններ են կատարում, որինակ, միլիոնավոր լորեր, որ չվում են Միջերկրական ծովի վրայով, կարող են իրենց վոտների կամ կատուցների վրա կպած շատ հողի միջոցով սերմեր տեղափոխել. Բայց յես նորից պիտի վերադառնամ այդ խնդրին.

Մեզ հայտնի յե նաև, որ լողացող առագաստանները յերբեմն իրենց հետ տանում են հող ու քարեր, իսկ երբոշ դեպքերում էլ նույնիսկ թփեր, վոսկրներ և ցամաքային թռչունների բներ, այնպես որ հազիվ թե կասկածի տեղիք առ այն, որ նրանք կարող են պատահականորեն, ինչպես այդ յենթադրում է Չ. Լայելը, տանել իրենց հետ նաև սերմեր արկտիկական կամ անտարկտիկական մի շրջանից մի այլ շրջան. առագաստները դադարելիս նրանք կարող եյին սերմեր տեղափոխել և այժմյան բաժանման գործում սահմանները. Այսպես օրինակ, յենթադրելով

այն հանգամանքից, որ Ազորյան կղզիների և Ցեմբրոպայի բուսական շատ տեսակներ նման են իրար՝ համեմատությամբ Ատլանտյան ովկիանոսի այլ կղզիների, որ ավելի մոտ են գտնվում մայր ցամաքին և բնական առնելով (ինչպես այդ նկատել է միստըր Չ. Ջ. Ռատսոնը) այն փաստը, որ այդ բույսերն ունեն ավելի հյուսիսային ընտրք, համեմատած այդ կղզիների աշխարհագրական լայնության հետ, կարծում եմ, որ Ազորյան կղզիները այդ բույսերի սերմերը ստացել են շնորհիվ առագային գարագրքյանի ժամանակ լողացող առուցվածների։ Իմ խնդրանքով սըր Չ. Լայելը գրել է Հարտուենդին հարցնելով, թե արդյոք նա չի դիտել այդ կղզիների վրա վայրենիներ, և պատասխանն է ստացել, որ նա գտել է գրանիտի և սլնատի քարտաշտակներ կտորներ, որոնք արդիսկզբի վրա չկան առհասարակ։ Դրա համար էլ ամենայն իրավունքով կարող ենք հետևցնել, որ լողացող առուցվածները մի ժամանակ իրենց բերը, որ բավականաչափ և յուղել ժայռերի գանազան կտորներից քաշվել են ովկիանոսային այդ կղզիների ափերի վրա և ըստ այդմ միանգամայն հնարավոր է, որ նրանք քաղցնեյին այդտեղ և հյուսիսային բույսերի սերմեր։

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ սերմերի տարածման մեջ քիչ գանազան յեղանակները, նույնպես և այլ յեղանակներ, որ անկասկած հետազոտության կհայտնագործվեն, դեռևս դեռ են կատարել տարբերների և հազարամյակների ընթացքում, կարծում եմ, որ շատ զարմանալի բան կլիներ, եթե շատ բույսեր չկարողանային լայն կերպով տարածումն գտնել։ Այդ յեղանակները հաճախ համարվում են պատահական, բայց այդ պատահականությունը այնքան էլ հեշտ չէ. ծովային հոսանքները պատահական չեն, այդպես և պատահական չեն սիրտպետող հողմերի ուղղությունը։ Բայց կարելի է ասել, որ հազիվ թե մինի տեղափոխման վրնաև յեղանակ, որ ի վիճակի լինի պահպանել սերմերը լավ դրության մեջ մեծ հեռավորության վրա, որովհետև մի կողմից սերմերը անկարող են պահպանել իրենց ծլունակությունը ծովային ջրի երկարատև ազդեցության տակ, և մյուս կողմից էլ նրանք երկար ժամանակ չեն կարող պահպանվել թռչունների կտամանի և մարսողական գործարանների մեջ։ Բայց այդ գանազան յեղանակները լինչ ուղում և լինի, միանգամայն հնարավոր են զարձնում, որ բուսական սերմերը պատահականորեն ծովի վրայով տեղափոխվեն մի քանի հարյուր մղոն

տարածութիւններ, տեղափոխուիլն մի կղզուց մի այլ կղզի կամ մի մայր ցամաքից մուտակ կղզիները, քնարեր և այդ յեղանակները անբաւական են տեսակների տեղափոխման համար մի մայր ցամաքից մի այլ մայր ցամաքը։ Իրարից հեռու ընկած մայր ցամաքների բուսական աշխարհները այս յեղանակներով չեն կարող խառնուիլ իրար հետ, դրա համար էլ նրանք տարբերուում են իրարից։ Ծովային հոսանքները շնորհիւ իրենց ուղղութեան չեն կարող տեղափոխել Հիւսիսային Ամերիկայից բրիոտանական կղզիները, բայց նրանք կարող են տեղափոխել և իսկապես տեղափոխուում են տեսակներ Վիստ Ինդիայից դեպի անգլիական արևմտեան կղզիները ծովափերը, և յիշեալ նրանք չեն էլ վիճաբանում այդ տեղափոխութեան ընթացքում յերկար ժամանակ ծովային ջրի մէջ մնալով, այնուամենայնիւ չեն կարողանում տանել հիւսիսալ կղզիները կլիման։ Դրեթէ ամէն տարի մի կամ յերկու ցամաքային քոչուն Հիւսիսային Ամերիկայից ամբողջ Ատլանտեան ովկիանոսը անցնելով՝ ընկնում է Իրլանդիայի կամ Անգլիայի արևմտեան ափերը, բայց տեսակներն այդ հազուագիւտ քամուառաջնորդներն մինչդեռ կարող են տեղափոխուիլ միևոյն մի դեպքում, այն է, յիշեալ գոնուիլն նրանց վոտներին կամ կտուցներին կպած հողի կտորների մէջ. մի քանի, վոր շատ քիչ դեպքերում է լինում։ Մակայն նուէն իսկ այդ դեպքում էլ շատ քիչ համանմանութիւններ կան, վոր այդ տեսակներն ընկնեն նպատակաւոր հողի մէջ և նրանցից դուրս յեկած բուսեակներն էլ կարողանան հասնել իրենց կատարեալ զարգացման։ Այնուամենայնիւ մեծ սխալ կլինեը կարծել, վոր յիշեալ Մեծ Բրիտանիայի նման հարուստ բնութիւն ունեցող մի կղզի, ինչքան հայտնի չե (թողց այդ շատ դժուար է ապացուցել) վերջին մի քանի հարիւրամեակների ընթացքում տեղափոխութեան պատահական այդ յեղանակներով քաղաքացիներ չի ստացել Եվրոպայից կամ մի այլ մայր ցամաքից, տալա ամէնէ ազգատ և մայր ցամաքից ամէնէ հեռու ընկած մի այլ կղզի նուէնպիսի նման յեղանակներով չի կարող ստանալ նոր գաղթականներ։ Հարկաւորութիւնը տեսակների և կենդանիների, վոր ընկնում են այս կամ այն յեղանակով վորևե կղզու վրայ, շատ ամէնէ քիչ բնակեցուած, քան Բրիտանիան է, քեզրան մեկը մեծ մասն այնքան հարմարուած լինի իր նոր բնակավայրին, վոր կարողանա այստեղ նատուրալիզացիայի ենթարկուիլ բայց դա չի կարող լուրջ առարկութիւն լինել տեղափոխութեան այսպահանջ յեղանակների նշանակութեան նկատմամբ,

յեղանակներին, վորոնք յերկրաբանական յերկար դարաշրջանների ընթացքում գործոն դեր են խաղացել մինչև վոր կղզին բարձրացել, ձևավորվել և և լցվել բնակիչներով։ Բայց գրեթե ամեն մի մերկ հողի վրա, վորտեղ շատ քիչ բուսականը մինչատներ և թռչուններ կան կամ բոլորովին չկան, համարյա թե ամեն մի սերմ կարող է ծլել և զարգանալ, յեթե միայն նա հարմարվում է ավյալ վայրի կլիմային։

ԵՑԱԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԵԼԸ ՍԱՌՅԱՑԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Լեռնադաշտավայրերի վրա տպրող բազմաթիվ բուսյակերի և կենդանիների նույնությունը, այնպիսի լեռնադաշտավայրերի, վորոնք անջատված են միմյանցից հարյուրավոր մղոն տարածություն ընդգրկող ցածրություններով, վորտեղ ալպիական տեսակները տպրել չեն կարող, հանդիսանում է առանձնացած վայրերում տեսակների տարածման ամենակարևոր որինաչափերից մեկը և այդ այն դեպքում, յերբ մի վայրից մի այլ տեղափոխվելը թվում է անհնարին։ Ուշագրավ փաստ է նաև այն, վոր շատ բուսյակներ տպրում են Ալպյան և Պիրենեյան լեռների ձյան չրջանում և Ցեվրոպայի ամենատարածվածները հյուսիսում, բայց ել ավելի ուշագրավ է այն փաստը, վոր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվող Սպիտակ լեռներում տպրում են նույն բուսյակները ինչ վոր մենք տեսնում ենք Լաբրադորում և ինչպես վկայում է Ազա-Գրեյը, տպրում են նաև Ցեվրոպայի ամենատարածվածները լեռների վրա։ Նման փաստերը դեռևս 1747 թվին Գմելինին թերել են այն յեզրակացության, վոր սիբիրյան տեսակը մեկը մյուսից անկախ կերպով կարող է առաջացած լինել գանազան վայրերում և մենք կվերաբերենք այդ կարծիքին. յեթե Ազա-Գրեյը և ուրիշները լուրջ ուշադրություն չդարձնեին տատցային գարաշրջանի վրա, վորը, ինչպես մենք այժմ կտեսնենք, պարզ բացատրություն է տալիս այդ փաստերին։ Մենք ունենք բազմատեսակ տպացույցներ, ինչպես որգանական, այնպես և անորգանական, վորոնք ցույց են տալիս, թե կենդանական Ցեվրոպան և Հյուսիսային Ամերիկան նորագույն յերկրաբանական դարաշրջանում ունեցել են մի ժամանակ բևեռային կլիմա։ Երկնի ճարատ պարճած տակ ավերակները չեն կարող իրենց անցյալը պատմել այնքան հասկանալի կերպով, ինչքան Շոտլանդիայի և Վալլիսի լեռները։ Ի վիճակի չեն պատմելու իրենց լանջերի վրա յեղած գծանմանո փոթվածքներով, հղկված մակերևույթներով և վալուն-

նների կուլտուրայի այդ տարբերային հատկանիշների մասին, որոնցով լցված են յեղել վերջին ժամանակները նրանց լեռնային հովիտները։ Ենիսեյսկայի կլիման փոխվել և այնքան ուժեղ կերպով, որ Հյուսիսային Խաղխայում նախկին տարեշրջանները քողած հսկայական սրունների այժմ պատել են խոզղոլի որթերի այգիներով և յեգիպտացորենի դաշտերով։ Երբեմնի վայրենիները և գծանման փորվածքներ ունեցող ժայռերը համոզեցուցիչ կերպով ապացուցում են, որ Միացյալ Նահանգների խոշոր մասում նախորդ դարաշրջանում սիրտպահանջկոտ են յեղել մեծ ցրտերը։

Ենիսեյսկայի բնակիչների տարածման վրա տարեշրջային կլիմայի ունեցած ներգործությունը եղել է շատ մեծ։ Տորթսի տված բացատրությունքով նրանց հետևյալն է յեղել։ Սակայն քերևս մեզ ավելի հնարա լինի հետևել նրա առաջ բերած փոփոխություններին, յերեք մեծագույն յենթադրյալներ, որ վրա յեն հանգում մի նոր տարեշրջային դարաշրջանի, որոն ունենում է նուրբ ընթացքը և վերջանում է այնպես, ինչպես յեղել է այդ առաջ։ Ինչքան ցրտերն ուժեղանան, այնքան հարավային գոտիները մեկը մյուսի յետևից ավելի հարմար կդառնան հյուսիսային բնակիչների համար և վերջիններս հետզհետե կդրավեն բարեխառն յերկրների նախկին բնակիչների տեղերը։ Միաժամանակ այս նախկին բնակիչները կհետանային կամաց-կամաց դեպի հարավ, յերբ է հարկն նրանց հանապարհի վրա չլինեն անանցանելի պատնեշներ, հակառակ դեպքում նրանք կենթարկվին վոչնչացմանը։ Լեռները կծածկվին ձյունով և սառույցով և նախկին ալպիական բնակիչները ստիպված կլինեն դեպի հովիտները։ Իսկ յերբ ցրտերը կհասանեն իրենց առավելագույն աստիճանին, արկտիկական բուսական և կենդանական աշխարհները կդրավեն Ենիսեյսկայի կենտրոնական մասերը հասնելով հարավային կողմից Ալպյան և Պիրենեյան լեռներին և մինչև անգամ Միջերկրական Միացյալ Նահանգների այժմյան բարեխառն շրջաններում նույն ձևով բնակություն կհաստատեն բևեռային կենդանիները ու բույսերը, որոնք դրեթե վոչնչով չեն տարբերվում յեվրոպականներից, քանի վոր այժմյան բևեռային յերկրների բնակիչները, որոնց վերաբերմամբ մենք յենթադրում ենք, որ ամեն կողմից գաղթել են դեպի հարավ, բևեռի շուրջը յեղած բոլոր մասերում զարմանալի կերպով նման են իրար։

Այնուհետև յերբ կլիման կսկսի կրկին տաքանալ, արկտիկական ձևերը կգնան դեպի հյուսիս և բարեխառն յերկրների բնա-

կիշխներն անմիջապես կհետևեն նրանց։ Միայն կոզմիից, քանի վոր լեռների ձյունը կհալվի նրանց առերսոններից սկսած, այդպես արկտիկական ձևերը հարկադրված կլինեն Աեվուռ ձյունից ազատված մասերում և կամաց-կամաց կբարձրանան դեպի լեռների բարձր մասերը, վորովհետև ինչքան կլիման ավելի տաքանա, այնքան լեռների ավելի և ավելի բարձր մասերը կազատվեն ձյունից, իսկ այդ ժամանակի ընթացքում նրանց կեղրայրները կհասնեն իրենց նախկին հյուսիսային բնակավայրերին։ Ահա այսպիսի պատճառով կլիմայի բոլորովին տաքանալուց հետո այն տասակը, վոր մի ժամանակ բնակվելիս է եղել Եևվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի ցածրադիր վայրերում, կլինի արդեն Հին և Նոր աշխարհների արկտիկական շրջաններում և մենք այստից խիստ հետաքրքրական լեռնազազաթների վրա։

Այս բոլորը մեզ համար հասկանալի կեն դարձնում, թե ինչու իրարից այնքան հեռու ընկած վայրերը, ինչպես Եևվրոպան և Միացյալ Նահանգների լեռներն են, պետք է ունենան այնքան շատ միևնույն բույսեր։ Այդ բոլորը մեզ համար հասկանալի կեն դարձնում նաև այն, թե ինչու յուրաքանչյուր լեռնազագաթյալ արկտիկական բույսերը պետք է այնքան մոտ ազգակցություն ունենան այն արկտիկական ձևերի հետ, վորոնք ապրում են նրանից ուղիղ դեպի հյուսիս կամ գրեթե դեպի հյուսիս ընկած վայրերում, քանի վոր ցրտերը ընկնելու դեպքում նրանց գաղթը և տաքերը ընկնելու դեպքում նրանց վերադարձը տեղի կը ունենան ուղիղ գծով կամ նրանից հարավ և կամ դեպի հյուսիս։ Որինակ, Շոտլանդիայի արկտիկական բույսերը միատեղ Հ. Զ. Ո ա տ ս ո ն ի կատարած դիտողություններին համաձայն և Գրրնլանդիայի լեռների արկտիկական բույսերը Ռ ա ն դ ի դիտողություններին համաձայն առանձնապես մերձավոր ազգակցություն ունեն Սկանդինավյան հյուսիսային մասերում ապրող բույսերի հետ։ Միացյալ Նահանգների բույսերը՝ լաբրադորականը բույսերի հետ և Մերձրի լեռների բույսերն էլ այդ կերկրի արկտիկական շրջանի բույսերի հետ։ Այս բացատրությունը, վոր հիմնվում է նախկին տաքացյին գրաքրջանի միանգամայն հաստատված փաստի վրա, իմ կարծիքով այնքան բավարար կերպով է բացատրում Եևվրոպայի և Ամերիկայի այժմյան արկտիկական և արկտիկական տեսակների տարածումը, վոր չեմ մենք էլ այլ կերկրի իրարից հեռու ընկած լեռնազագաթների վրա գտնելու լինենք միևնույն տեսակները, ապա մենք առանց վորևե ժպտության իրավունք կունենանք կոչ-

բանակցություններ, որը մի ամիսը ցուրտ կլիմա պրոնթից առաջ հնարավորություն կտար ավելի

